

ԼԵՎՈՆ ԽԱՉԻԿՅԱՆ

ԵՐԶՆԿԱ ՔԱՂԱՔԻ «ԵՂԲԱՐՑ ՄԻԱԲԱՆՈՒԹԵԱՆ»
ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ (1280 Թ.)

1 1/2
+ 9

Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի հասարակական գիտությունների բաժանմունքի «Տեղեկագրի» 1951 թ. № 12-ում տողերիս գրողը հրատարակել էր մի հաղորդում, նվիրված 1280 թվականին Երզնկայում կազմակերպված Եղբարցությունը և նորաստեղծ այդ կազմակերպության համար Հովհաննես Երզնկացու (մ.հ. 1293 թ.) գրած «Մահման և կանոնք»-ին:

Շատ ժամանակ չի անցել այդ հաղորդման հրատարակումից, բայց այն մտել է արդեն գիտական լայն շրջանառության մեջ. Երզնկայի Եղբարցության «Մահման և կանոնքը» իրավացիորեն համարվել է կարևոր մի սկզբնաղբյուր, որը լույս է սփռում միջնադարյան Հայկական քաղաքների ներքին կյանքի վրա, հանդիսանալով համբարությունների գոյությունը հավաստող ամենաուշադրաձև փաստաթղթերից մեկը: «Մահման և կանոնքը» հնարավորություն է ընձևել միաժամանակ նոր տեղանկյունից քննարկելու միջնադարյան նշանավոր բանաստեղծներ Հովհաննես և Կոստանդին Երզնկացիների ստեղծագործությունները, բացահայտելով դրանց կապը քաղաքային բնակչության՝ առևտրականների և արհեստավորների և, մասնավորապես, եղբարցությունների մեջ բնագրված ամուրի երիտասարդների հետ:

Սրանով, սակայն, չի սպառվում Երզնկայի Եղբարցության «Մահման և կանոնքի» նշանակությունը. այսուհետև ևս այն գրավելու է սեևս ուշադրություն, որպես միջնադարյան Հայկական քաղաքներում ստեղծված եղբարցությունների մասին եղակի ու բովանդակալից սկզբնաղբյուր:

Նկատի ունենալով այդ հանդամանքը լույս են բերում Երզնկայի Եղբարցության կանոնադրությունը՝ Մատենադարանի այդ բնագիրը պարունակող երեք ձեռագրերի բաղադրությամբ:

Հակիրճ այս ներածականում, վերաշարադրելով «Տեղեկագրի» 1951 թ. № 12-ում տպագրված մեր հաղորդման հիմնական եզրակացությունները, միաժամանակ, նոր նյութերի հիման վրա, կատարում ենք որոշ լրացումներ:

* * *

1280 թվականին Երզնկայում կազմակերպված Եղբարցության մեջ միավորվել են քաղաքի առևտրական և արհեստավորական շերտերին պատկանող ամուրի երիտասարդները: Նրանց նպատակն է եղել միացյալ շանքերով դիմագրավել «բռնաւորաց» և «չար մարդկան», օգնել տնտեսապես քայքայված բնակչոջը, գորավիզ լինել միմյանց տնտեսական ու հասարակական կյանքի տարբեր բնագավառներում:

Նդրաչրությունն ունեցել է ժարտական կազմակերպություն, սկզբնական օղակում միավորվել են տասր անդամներ՝ տասնապետի («տասին գլուխն») հրամանի ներքո. 4 այդպիսի օղակներից կազմվել է Նդրաչրության հաջորդ բջիջը՝ «բառասունին մեծի» գլխավորությամբ: Կազմակերպության գործերը տնօրինել է «գլխաւոր եղբարք» կոչվող մարմինը, «գլուխ եղբայրութեանն» անվանյալ պաշտոնյայի նախագահությամբ:

Նդրաչրության մեջ եղել են «աւագ» և «կրտսեր» անդամներ: Ըստ որում կրտսերը պարտավոր է եղել հնազանդվել ավագ եղբորը, իսկ վերջինս՝ քաղցրությամբ վարվել ու խրատել կրտսերին:

Նդրաչրության անդամները պարտավորվել են խստագույնս հետևել կանոնադրության հրահանգներին. հանցապարտները վտարվել են եղբայրությունից:

Մատթեոս Ուռհայեցու «Ժամանակագրության» մի ուշադրով հատվածը¹, ինչպես և այլ փաստեր, հնարավորություն են տվել պարզելու, որ ցարդ սխալ մեկնարանված «մանկտաւագ» (նաև «մանկասար», «մանգասար») միջնադարյան տերմինը սերտորեն աղերսվում է նրզնկաչի Նդրաչրությանը հար և նման կազմակերպությունների հետ, ուստի և նման կազմակերպություններ եղած պետք է լինեն հայկական կամ հայարնակ բոլոր այն քաղաքներում, որոնցում տարբեր առիթներով հիշատակվել են մանկտավագ կոչվող պաշտոնյաներ:

Վերահիշյալ մեր հաղորդման մեջ, հենվելով կազմնակի որոշ փաստերի վրա, եզրակացրել էինք, որ նրզնկաչից բացի եղբայրությունների գոյությունը հավաստվում է նաև Անիում և Վանում: Չնայած Զեքի տակ ունենալով մանկտավագ կոչումը կրող անձանց մասին վկայություններ պարունակող հիշատակարաններ՝ նույն կարծիքն էինք հայտնել նաև Սուլթանիայի (Իրան) և Կաֆաչն (Ղրիմ) մասին, որոնց բնակչության մի զգալի մասը հայեր էին²:

Այժմ կարող ենք ավելացնել, որ մանկտավագ, ուստի և Նդրաչրություն է եղել նաև Կարին քաղաքում: 1283 թվականին, Կարինի գավառի Կան գյուղում բնդօրինակված մի ձեռագրի հիշատակարանում՝ կան այսպիսի տալեր. «Կս տէր (Աւարս) ստացայ զսուրբ Աւետարանս... չիշատակ ծնաւդաց իմոց, և ամենայն նախնեաց, հարն իմոյ մանկտաւագ Մերչերոյն և մարն իմոյ Մինասթերին»³:

Ավելի առատ են տեղեկությունները երիտասարդ ու ամուրի հայ երիտասարդների ուկրաինահայ և լեհահայ գաղթավայրերում ստեղծված կազմակերպությունների մասին: Այս առումով մեծ հետաքրքրություն է ներկայացնում Վիեննայի Մխիթարյանների մատենադարանի № 453 ձեռագիրը, որի էջերում բնդօրինակված է Յազլովեց քաղաքի «Կտրիճվորաց եղբայրութեան» կանոնադրությունը (վերահաստատվել է 1658 թվականի փետրվարի 10-ին, տխրահոշակ նիկոլ արքեպիսկոպոս Թորոսովիչի կողմից): Այն, իր ամբողջությամբ, դեռ չի հրատարակված. բայց նույնիսկ Հ. Տաշյանի ցուցակում մեջ բերված

1 Մ ա տ թ ե ո ս Ու ռ հ ա յ ե Յ ի, Ժամանակագրություն, Վաղարշապատ, 1898, էջ 226:

2 Սուլթանիայում հիշատակվում է Հովհաննես մանկտավագը՝ 1329 թ. և Ներսես մանկտավագը՝ 1357 թ., իսկ Կաֆաչում՝ Կազուր մանկտավագը՝ 1334 թ. (տե՛ս Լ. Խաչիկյան, ԺՊ գրքի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, Երևան, 1950, էջ 217, 265, 426):

3 Բ. Մ ա ր գ ի ս յ ա ն, Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մատենադարանին Մխիթարեանց ի Վենետիկ, հատոր առաջին, Վենետիկ, 1914, էջ 645:

բաղվածքները՝ հնարավորութիւն են տալիս ընդհանրութեան որոշ կետեր նըշմարել Երզնկայի և Յազուվեցի եղբայրութիւնների միջև:

Յազուվեցի եղբայրութեան զեկավարութիւնը կենտրոնացված է եղել կորիճների (իմա «երիտասարդ ամուրիների») «վոյլտաբ» (ВОЕВОДА) և «սդարբսդայ» (СТАРОСТА) կոչվող պաշտոնյաների ձեռքում: 1646 թվականին վոյեվոդա է եղել վոյթ Կարասկաի որդի Սիմեոնը, իսկ ստարոստա՝ պան էսերպեկի որդի Խրաբրը, այլ խոսքով հայկական համայնքի ամենաազդեցիկ և ունեւոր անձանց որդիների ձեռքին է եղել եղբայրութեան զեկավարութիւնը:

Կանոնադրութիւնը բաղկացած է 31 արտիկուլներէ, որոնք շոշափում են Կորիճվորաց եղբայրութեան ներքին կազմակերպութեանը և անդամների փոխադարձ պարտավորութիւններին ու իրավունքներին վերաբերող բազմապիսի հարցեր:

Ուշագրավ է նաև 1690 թ. Եղիազար կաթողիկոսի կողմից հաստատված, իսկ այնուհետև՝ 1790 թ. Հովսեփ արքեպիսկոպոս Արղությանի վերահաստատած Պատուշան, Յաշ և Ուրմանի քաղաքների «Կորիճվորաց եղբայրութեան» կանոնադրութիւնը⁴:

Կամենեց-Պոդոլսկ քաղաքի Կորիճվորաց եղբայրութեան մասին մեզ հայտնի վկայութիւնը 1522 թվականից է: Քաղաքի հայկական եկեղեցիներից մեկի նվիրաբերութիւնների մատչանում, այդ թվականի տակ գրանցված է հետևյալը. «Զմիաբան կորիճներն նկարել ետուն զկէս եկեղեցին՝ հանդերձ բոլորովին սաակերքներով»⁵: Նիկոլ Քորոսովիչի արքեպիսկոպոսութեան տարիներին (1626—1681) ստեղծվել է նաև Ստանիսլաւի «Կորիճվորաց եղբայրութիւնը»⁶:

Եղբայրութիւններ, անշուշտ, եղել են նաև Ուկրաինայի, Լեհաստանի, Մոլդավիայի, Ռումինիայի և Հունգարիայի հայաբնակ մյուս քաղաքներում, որոնցից մի քանիսի մասին պահպանվել են արխիվային արժեքավոր փաստաթղթեր: Դժբախտաբար դրանք զեւեւ հրապարակված չեն, ուստի վաղաժամ է որևէ խոսք ասել այն մասին, թե որքանով են մայր հայրենիքից կարված ու հեռավոր այդ երկրների հայաշատ քաղաքներում ստեղծված եղբայրութիւնները ծագումնաբանորեն կապվում բուն Հայաստանի նույնատիպ կազմակերպութիւնների հետ:

Սակայն, եթե նկատի առնենք այն հանգամանքը, որ վերոհիշյալ երկրների քաղաքային կյանքի, առևտրի և արհեստագործութեան զարգացման գործում հայ գաղթականները նշանակալից դեր են կատարել և հարյուրամյակներ շարունակ համառորեն ձգտել են իրենց համայնքների ներքին կյանքը կազմակերպել հայրենի երկրի ավանդական սկզբունքներով, կարելի է թերևս եզրակացնել, որ քաղաքաբնակ երիտասարդների եղբայրութիւնները ևս այդ գաղթավայրերում ստեղծվել են ոչ թե տեղական ժողովուրդների համանման կազմակերպութիւնների, այլ միջնադարյան Հայաստանի քաղաքների օրինակով:

4 Հ. Տ ա շ յ ա ն, Յուցակ հայերէն ձեռագրաց Մատենադարանին Միֆթարեանց ի վիկննա, 1895, էջ 923—924:

5 Տե՛ս «Արարատ» ամսագիր, 1889 թ., էջ 387—405:

6 Մ. Բ ժ շ Վ յ ա ն, Ընտանաբնորդութիւն ի Լեհաստան, Վենետիկ, 1830, էջ 149:

7 Չ. Ա լ ի շ ա ն, Կամենեց, տարեգիրք Հայոց Լեհաստանի և Ռումինիոյ, հաստաշուկայ յաւելումով, Վենետիկ, 1896, էջ 129: Տե՛ս նաև Լ. Խ ա շ ի կ յ ա ն, Հայկական գաղթավայրերը՝ Ուկրաինայում XVI—XVII դարերում («Տեղեկագիր», 1954 թ., № 4, էջ 53—54):

Հրապարակելով Երզնկայի եղբայրության «Սահման և կանոնքը», հույս ենք հայտնում, որ այս հարցը հատուկ բնութիւնն առարկա կդառնա ուկրաինահայ և լեհահայ գաղութների պատմութեամբ զբաղվող մասնագետների կողմից և կստանա իր բավարար պատասխանը: Եվ եթե պարզվի, որ Հայաստանից դուրս գտնվող հայաբնակ քաղաքների Կտրիճվորաց եղբայրությունների հիմքում ընկած են հայրենական ավանդությունները, ապա մենք հնարավորութեան կունենանք միջնադարյան Հայաստանի քաղաքային կյանքի ազոտ պատկերը լուսավորելու համար, այս կամ այն չափով օգտվել նաև Ուկրաինայի և Լեհաստանի հայաբնակ քաղաքների մասին պահպանված հայերեն, հայատառ գիշաղերեն և լեհերեն արխիվային առատ նյութերից:

«Տեղեկագրում» տպագրված վերոհիշյալ մեր հաղորդման մեջ մատնանշել էինք, որ հայկական քաղաքների եղբայրությունները ընդհանուր շատ բան են ունեցել փոքրասիական քաղաքներում XIII դարում առաջացած «Ախի» («եղբայրություն») կոչվող կազմակերպությունների հետ:

Արար նշանավոր ճանապարհորդ Իրն-Բատուան, որ 1332 թվականին շրջում էր Փոքր Ասիայում, հաճախ հյուրընկալվել է «ախիների» կողմից և ծանոթացել, մասնավորապես, Երզնկայի «ախիների» կազմակերպությանը, ուշագրավ տվյալներ է հաղորդել կազմակերպության անդամների միմյանց նկատմամբ ունեցած պարտավորությունների, նրանց հավաքույթների ու խնձույքների և դավանած գաղափարների մասին: Ախիները, — ըստ Իրն-Բատուայի, — կանգնած էին ազատության պաշտպանության դիրքերում, պաշարում էին բռնապետների ու նրանց կամակատարների դեմ, տառապյալներին ու չքավորներին օգնելը մտնում էր նրանց սրբազան պարտականությունների մեջ և այլն:

Նույն սկզբունքների վրա են խարսխված եղել նաև հայկական եղբայրությունների գաղափարական ու կազմակերպչական հիմքերը: Երզնկայի եղբայրության մեջ միաբանվածները տողորված են եղել հարեան ժողովուրդների հետ հաշտ ու խաղաղ ապրելու և գործակցելու ջերմ ձգտմամբ: «Սահման և կանոնքի» մեջ կան ուշագրավ այսպիսի տողեր. «Եւ խաղաղասէրք լինին եղբարքս մեր ի մէջ աշխարհի, բնդ ամենայն ազգ մարդկան սիրով առնիցին գասել և զլսել, որ յամենայն ազգէ իմաստունք լիցին, մեծարեսցին և յիմաստութենէն շահեսցին՝ առանց հակատակութեան»:

Հայրենի քաղաքից դուրս, առևտրական կարավանների հետ երթևեկելիս, եղբայրությունների գեներ խումբ ու զինավառ անդամները («մանկտիք», «կտրիճվորացք»), մանկտավազի հրամանատարութեամբ՝ պաշտպան էին կանգնում իրենց կյանքին ու գույքին, թշնամական հարձակումների ժամանակ նրանք անտարակույս, մառնակցում էին հայրենի քաղաքի պաշտպանողական մարտերին, իսկ խաղաղ պայմաններում, նույն այդ երիտասարդները, խմբվում էին խնձույքների, դիշերների լուսացնում դինարրութեամբ, ունկնդրում իրենց սիրելի բանաստեղծների և դուսանների հորինած սիրո և ուրախութեան երգերը: Ըստ ժողովրդական ասացողների «քաջաց զրոյց»-ները, որոնք սովորեցնում էին «զօրաւոր մանուկ և յողթօղ լինել», և զվարճանում էին հեղաձամուկ վարձակների ու մորճերի պարերը դիտելով, երգերը ըմբռնանելով:

Մեր հաղորդման մեջ ցույց էինք տվել Կոստանդին Երզնկացու սերտ կապն ու մտերմութեանը Երզնկայի եղբայրության անդամների հետ: Կոստանդինը

իր լավագույն սիրտ տաղերից մեկը գրել է Տենց երզնկացի եղբայրների պատվերով, որոնց մասին ակնարկել է սուրբ Բերվոյ քառյակի մեջ.

Նորարք մի կան Տեա մեզ սիրով,
Աշխարհի բան ուղեն գրով,
Նայ ես վասն այն յայտնի ձայնով,
Սիրու բաներս ասցի յոյով⁸:

Հովհաննես Երզնկացու մտերիմներից է եղել իր հայրենակից Հակոբ մանկատալագր, մի անձնավորութիւն, որը, հավանաբար, մեկն էր Երզնկայի Նորարքութեան գեկավար մանկտալագներից: Մրա խնդրանքով է հորինել Հովհաննեսն իր արժեքավոր ստեղծագործութիւններից մեկը, որն ունի «Յակոբ, դարթիր ի բնոյ մեղաց» սկզբնավորութիւնը⁹:

Բանաստեղծութեան մեջ կան մի բանի ակնարկներ պատվիրատուի մասին. նրա երեսուն տարին նոր է լրացել, եղել է «աղօթից ծոյլ», եկեղեցի շահախոյ ու պահք շտախոյ մի երիտասարդ: Երախացի է Ա. Սրապչանը, ենթադրելով, թե այս Հակոբ մանկտալագն է Տենց հիշված Մխիթար Ապարանեցու կողմից, որպէս մեկը, որն ուրացել է սուրբ երրորդութիւնը և «հանապազորդ յաղօթս իւր» ասել, թե «ինքն է հայր, ինքն որդի և ինքն հոգին սուրբ»¹⁰:

Միջնադարեան հայ դուստնական քնարերգութեան գլուխ-գործոց հայրենի մի զգալի մասը եւ հորինված է քաղաքարնակ ամուրի երիտասարդների պատվերով ու նրանց խնձույքներում երգվելու համար:

Հայրենիներից մեկի անձանոթ երգիչը իր խոսքն ուղղակի հասցեագրում է խնձույքի սեղանին բոլորած «մանուկներին»՝ այսպէս.

Գիշերս ես ի բուն էի,
Քունս ի ներս սրտիկս երեցաւ.
Եկին ու բերին խապար.
«Քո սիրած կարն գրեկ մոռացաւ»:
— Մանկաի՛ն, ձեռ արեւդ ասեմ,
Լսեցի, լեզուս կապեցաւ¹¹:

Մանոթանանք նաև մի ուրիշ հայրենի.

Գիշերս ես ի դուրս ելայ,
Քիչ մի լուրջ ու քիչ մի գինով.
Իմ կարն ինձ դէմ գիպաւ,
Մոցն իյի կարմիր խնձորով.
Չեսքս տարայ, այն տրի,
Նա կանչեց. «տարաւ ճրղներով»:

⁸ Կոստանդին Երզնկացի, ՃԳ դարու ժողովրդական բանաստեղծ և իւր բերթուածները, Տրա. Մ. Պատուրջան, Վենետիկ, 1905, էջ 161:

⁹ Ա. Բ. մ. և Ն. Բ. Ս. Սրապչան, Հովհաննես Երզնկացի, Երևան, 1958, էջ 172:

¹⁰ Ղ. Ա. Ի. շ. ան, Հայապատում, Բ, Վենետիկ, 1901, էջ 552:

¹¹ Մ. Ա. Բ. և Ղ. շ. ան, Գուսանական ժողովրդական տաղեր, Երևան, 1940, էջ 12:

— Մանկախի՛մ, ձեր արևն ասեմ,
Կամ շատի ևս իրմէն ճորով¹²:

Եվս մեկ օրինակ.

... Յանշափ ջանացի իւր հեան,
Որ իւրմէն պաղփկ մի առի,
Ի քաղցրութենէն, Եղբայր՛մ,
Բաներ է սրտիկս, որ կայրի...¹³:

Սրանցով շին սահմանափակվում այն հայրենները, որոնցում երգիչ-դուսանը դիմում է իր ունկնդիրներին, կոշելով նրանց մեզ ծանոթ և քաղաքարնակ ամուրիների կազմակերպությունների հետ սերտ աղերսի մեջ եզոզ՝ «մանկախի», «եղբայր», նաև «կարիճ» տերմիններով¹⁴:

Մակայն կարեորն այդ կոշումները շին, այլ այն, որ հայրենների մեծագույն մասը հորինված է հենց քաղաքային առևտրական ու արհեստավորական շերտերի կյանքին ու գործունեությանը բնորոշ պատկերներով ու միջադեպերով. նրանց նիստ ու կացը, շահի հոտից՝ աշխարհից-աշխարհ թափառելը, «բաժոզ անցնելը» (այսինքն՝ մաքսանկնդությունը), արվեստակիցների («Տարիֆներ») հետ սեղան նստելն ու դինարբուրով զվարճանալը և կյանքի այլ բնորոշ կողմերը արտացոլվել են հայրեններում գեղարվեստական մեծ ընդհանրացումներով: Շատ հաճախ մեր դուսանները հենց նրանց տեսանկյունով են դիտել աշխարհն ու դնահատել մարդկային ու հասարակական հարաբերությունները:

Բերենք մի բնորոշ օրինակ: 1371 թվականին շարադրված ձեռագիր մի աշխատության անհայտ հեղինակը ողբացել է հայ եկեղեցու անմխիթար վիճակը, ժողովրդի (հատկապես՝ երիտասարդության) խորթացումը եկեղեցուց և այլն: «Բակ ժողովրդականք,—գրել է նա,—ամաչիք և թափառականք, կորդացեալ մտաւք, մոլորեալ ի գիտութենէ. գիտատովանութիւն ոչ գիտեն, ... լեկեղեցի ոչ դիմեն, ... զաղօթս և զարտատես ոչ ճանաչեն, ... ի պատարագ ոչ փափաղին» և այլն: «Լուս յունեմնէ,— շարունակում է նա,— գի պատմէր զմարդոյ, վկայեալ ի հարազատ եղբարէ իւրմէ, գի հնգեաասանամեա գոլով և զեռ պատարագն շէր տեսեալ յեկեղեցուջ. և զայլ ունեմնէ, թէ ժ (10) ամ աւելի ևս էր, որ մարմնոյ և արեան տեսան շէր հաղորդել»¹⁵:

Տասնհինգամյա այդ պատանին, որ իր կյանքում զեռ եկեղեցի շէր մտել ու պատարագ շէր տեսել, կամ նրա տարեկիցը, որ 10 տարուց ավելի հաղորդություն շէր ընդունել, անտարակույս, պատկանում էին քաղաքարնակ աշխարհատասարդների թվին, որոնք ունկնդրում և սիրով արտատանում էին հանրածանոթ այն հայրենը, ուր առված է.

Քանի մարչն գիս բերեր,
Քահանի շեմ խոստովաներ.

12 Մ. Ա. Բ. Կ. Յ. Ա. Ն, Գուսանական ժողովրդական տաղեր, Արևան, 1940, էջ 163:

13 Նույն տեղում, էջ 179:

14 Տես նաև նույն տեղում, էջ 146, 147 և այլն:

15 Մատենադարան, ձեռ. N 581, էջ 255բ, 256բ:

Ուրտեղ քահանայ տեսեր,
 Նայ ծուեր ճամփուս ու ելիր.
 Ուրտեղ մէկ աղւոր տեսեր,
 Գիրկ ու ծոց ՚ւ ի գէմ գնացեր...¹⁶:

Միջնադարյան հայ քնարերգութեան լավագույն այս էջերի ստեղծագործական միջավայրի ու տարածման ոլորտների մասին մեր գիտելիքներն անշուշտ հարստանում են այն բանից հետո, երբ տեղյակ ենք դառնում հայկական քաղաքներում ստեղծված ամուրի երիտասարդների եղբայրութիւնների գոյութեանը և խորամուխ լինում նրանց անդամների գործունեութեան և նիստ ու կացի մանրամասնութիւններին:

«Մահման և կանոնքի» քնազիրը հրատարակում ենք Մատենադարանի ստորե նշվող երեք ձեռագրերի բազմաթիւութեամբ.

A — № 2329, ժողովածու, 1291 թ., էջ 287ր—295ա:

B — № 652, Կանոնգիրք, XV—XVI դդ., էջ 70ր—75ր:

C — № 2173, ժողովածու Հովհաննէս Երզնկացու քարոզների և մեկնութիւնների, ԺԳ դար, էջ 257—260ր (վերջից թերի):

* * *

Մահման և կանոն միաբանութեան եղբայր¹, որք աստուածային սիրովն միաբանեցան յեղբայրութիւն միմեանց ի մայրաքաղաքս, որ կոչի Եզնկայ², ի րուխ՝ ՉԻԹ՝ (1280). Աստ հանդիպելով և ձերունի³ վարդապետն Գրիգոր⁴ Մանանեցի, որ և գրեցաւ ի գրութիւն եղբայրութեանս⁵. և ես՝ նուստ վարդապետ⁶ Յովհաննէս Եզնկացի⁷ գրեցի զսահման և զխրատ եղբայրութեանս և զշահաւետ ազուսան⁸ որ ի սմանէ, առաջնորդութեամբ սուրբ հոգւոյն.

Բանն աստուած, որ բանիւ գոչացոյց զամենայն արարածս և զբանն իւրական հոգի կոչեաց և կեանք՝ բանին⁹ խմաստութեամբ զարդարեաց զհոգիս մեր, զի որպէս հացիւ կերակրի մարմին, այսպէս բանիւ հաստատի հոգի:

Արդ, հոգիացոցիչ բանն Քրիստոսի ուսուցանէ զմեզ¹⁰, զի երկու են դուռն և ճանապարհ վարուց մարդկան, զոր ընտրեն¹¹ և գնան ճանապարհորդք կենցաղոյս: Նեղ է դուռն և անծուղ է¹² ճանապարհն, որ տանի ի կեանսն և սակաւք են, որք մտանեն ընդ նա¹³. լայն է և ընդարձակ է ճանապարհն, որ տանի ի կորուսան, և բազումք գնան¹⁴ ընդ նա:

Արդ, նեղ և անծուղ ճանապարհն՝ զառաքինութիւնն սակ և զբարեգործութիւնն, որ հեշտասէրքն և մեղաւք մոլորեալքն ոչ կարեն գնալ, և սակաւք են յաշխարհի, որք չաժարական սիրով գնան ընդ նա, իսկ լայն և ընդարձակ ճանապարհն՝ զմեղացն սակ և զշար գործոցն¹⁵, զոր մեղասակք¹⁶ և աշխարհասէր մարդիկ սիրեն և չաժարին գնալ ընդ նա: Արդ, այս երկու ճանապարհիս

¹⁶ Մ. Արևելյան, Գուսանական ժողովրդական տաղեր, էջ 145:

¹ B եղբայրս: ² AB մեծ փխ որ կոչի յեզնկայս: ³ AB ի թղ: ⁴ B Գրիգոր չիր: ⁵ B միաբանութեան եղբայրութեան գրութի փխ ի գրութի եղբայրութեանս: ⁶ C վարդապետս: ⁷ C Յոհաննէս, A Եզնկեցի, B Յոհաննէս Երզնկացի: ⁸ B և ազուսան: ⁹ AB բանին: ¹⁰ A մեզ: ¹¹ A ընտրեն: ¹² AB է չիր: ¹³ B այն փխ նա: ¹⁴ B մտանեն փխ գնան: ¹⁵ A զշարագործոցն: ¹⁶ A մեղասակքն:

երկու առաջնորդ են, որ կոչեն զմարդիկ զնալ զՏեա¹⁷ իրեանց: Բարի ճանապարհին՝ առաջնորդ է հոգին սուրբ, զոր և մարդարէն Գաեթ հայցէ՝ «Հոգի քո բարի առաջնորդեսցէ ինձ յերկիր»¹⁸ ուղիդ»: Եւ շար ճանապարհին առաջնորդ¹⁹ սատանայ է, զոր վէմն հաւատոյ Պետրոս ասէ՝ «Ոսոխն ձեր սատանա իբրև գառիւծ գոչէ և խնդրէ թէ զոյ²⁰ կլանէ»:

Արդ, եղիցի եղբայրութեանս²¹ մեր հոգին²² սուրբ առաջնորդ, հանդերձ հարբ և միածնի սրղոփն²³, և առաջնորդեսցէ մեզ յերկիր ուղիդ՝ բարի ճանապարհաւն ընդ արքունի պողոտայն, առանց խոտորելոյ յաջ կամ յահեակ²⁴, զի մի ի զինուցն երկոցունց խոցոտեսցուք, այլ իբրև ի վերայ կամրջի²⁵ գետոյ ընդ մէջն զնալով մի վերոյ կամ ներքոյ գետավէժ լիցուք: Եւ զի ժողովասէք է բնութիւն մարդոյս և ընդամուկ շարի և բարոյ²⁶ քսա նմանութեան աւոյշս, զի զորաւրինակ առ ի ծագել արեղականն լուսաւորի և ի դալ զիշերոյն՝ սեւացեալ խաւարանա, աչսպէս և մարդ, եթէ դաստուածային բանն և զհոգևոր խրատն և զլոյս պատուիրանացն աստուծոյ ասնու ի միա՝ լուսաւորի և պայծառանա, և թէ²⁷ սատանայի ազդմանցն և մեղաց խրատուն լինի ընդամուկ՝ նսեմանա²⁸ և խաւարի: Եւ զորաւրինակ հող երկրի, զոր ինչ սերմանէ մարդ²⁹ զայն բուսուցանէ, աչսպէս և հողեղէն բնութիւն մարդոյս, զոր ինչ սերմանեն՝ զայն պողաւրերէ³⁰, եթէ փուշ՝ մեղաց և եթէ ծաղիկ՝ առաքինութեան: Արդ, լոյս պատուիրանացն աստուծոյ լուսաւոր լիցի յոգի եղբայրութեանս և ծաղիկք³¹ ամենայն բարութեանց բուսցին ի բնութիւն սոցա:

Բայց արժան է գիտել եթէ բանի տեսակք են եղբայրութեանն³²:

Առաջինն այս է. զի ի միոյ բնութենէ սարերացս միոյ արարչին³³ ստեղծուածքն³⁴ եղբայր ասին. և այս հասարակաց է՝ բանականաց և անբանից, կենդանեաց և անկենդանեաց:

Ինկ երկրորդ եղբայրութիւն այն է, որ ի միոջէ ծնողաց³⁵ ծնեալ լինին, և այս սակաւաւոր է:

Իսկ երրորդ եղբայրութիւն, որ և ճշմարիտն է և հոգևորն, այն է, որ ի հոգւոյն աստուծոյ ծնեալքն և ի մի աւաղան մկրտեալքն եղբարք ասին միմեանց և Քրիստոսի, և³⁶ երկնաւոր հարն սրղիք, և արքայութեանն ժառանգաւորք³⁷, և³⁸ Քրիստոսի ժառանգակիցք, և այս յատուկ³⁹ քրիստոսնէից է պարգեւալ շնորհք, որք⁴⁰ անուամբն Քրիստոսի կնքին:

Այլ դուք ի վերայ այսոցիկ շորրորդ տեսակք եղբայրութեան հաստատեցէք ի միջի ձերում, որ գրովն է և կանոնական⁴¹ սահմանաւոր, և բարէսէք ժողովմամբ, և ընկերակցութեամբ, և միաբանութեամբ, և միով⁴² հաւատով և սիրով, և երկնաւոր ցանկութեամբ: Եւ ոչ եթէ նոր է այս, այլ զոր քրիստոսնէից⁴³ վայել է գործ՝ զայն ուսուցանէ:

Եւ բողոք է այս եղբայրութեան սահման, զի սրպէս բազմութիւն աստեղաց զերկինս գարդարեն, աչսպէս և բազմութիւն եղբարց սիրով⁴⁴ ժողովելոց՝ զեկեղեցի պայծառացուցանեն: Եւ սրպէս բազմութիւն դուրաց բաշտմարտիկ զինուորաց միաբանելոց գիրաւ յաղթեն թշնամեացն, աչսպէս եղբարցն բազ-

¹⁷ B ի հեա: ¹⁸ C ի յերկիր: ¹⁹ B առաջնորդն: ²⁰ B գով, C գո: ²¹ B եղբայրութիւնս փիւ եղեցի եղբայրութեանս: ²² AB հոգի: ²³ B սրղոփն: ²⁴ A յահեկ: ²⁵ B կարմրնջի: ²⁶ B բարոյ և շարի: ²⁷ AB եթէ: ²⁸ B և նսեմանայ: ²⁹ AB որ փիւ մարդ: ³⁰ B պողաւրերէ: ³¹ AB ծաղիկ: ³² B եղբայրութեանս: ³³ AB արարչի: ³⁴ B ստեղծուածք: ³⁵ AB ծնաւոցաց: ³⁶ B և չիր: ³⁷ AB ժառանգաւորք: ³⁸ B և չիր: ³⁹ C յատուկ չիր: ⁴⁰ B որ, C որ չիր: ⁴¹ C կանոնական: ⁴² B միով չիր: ⁴³ C քրիստոսնէից: ⁴⁴ C սիրով չիր:

մութիւն քաջ հաւատով և հաւասար սիրով՝ դիւրաւ յաղթեն սատանայի, և մեղաստէր դիւացն, և շար մարդկան, որք⁴⁵ շարժին ի սատանայէ:

Եւ արդ, դիցուք զսահման մերոյ եղբայրութեանա, որ⁴⁶ են երեք սեռական գլուխք. առաջին⁴⁷, եթէ ամենայն որ իւր անձամբն որպէ՛ս քաղաքավարի. երկրորդ, թէ զի՛նչ ազատութիւն և շահ արասցեն միմեանց այս միաբանեալ եղբարքս և ո՛ր է պտուղ միաբանութեան սոցա. երրորդ, թէ որպէ՛ս ի հասարակաց կենցաղոյս ի մէջ աշխարհի և ի մէջ քաղում ազգաց իմաստութեամբ գնասցեն ի շինութիւն տեսողացն և ի փառս անուանն Քրիստոսի:

Եւ արդ, ասացուք⁴⁸, զոր պարտ է ամենայն զմէք իւր անձինն ստանալ. զի գորտերինակ արեգակն հասարակաց ծագէ, քայց սւ՛մ տեսանելիքն առողջ են՝ նա լուսաւորի, աչսպէս և աստուածային⁴⁹ արէնքն⁵⁰ հասարակաց է ամենայն աշխարհի, այլ որ սիրէ և գործէ՝ նայ է արինազարդ և աստուածային լուսովն պայծառացեալ:

Լուարուք երիտասարդք և աղահասակ⁵¹ մանկունք⁵², որք միաբանէք⁵³ ա. յեղբայրութիւնս: Այս ձեզ առաջին արէնք՝ սիրեցէք զաստուած զարարիչն ձեր և փանս սիրոյ նորա արհամարհեցէք զամենայն սէր աշխարհիս:

բ. երկրորդ. պատուեցէք զծնողսն⁵⁴ ձեր՝ զհայր և զմայր, որ հետ⁵⁵ աստուծոյ պատճառ են ձեր⁵⁶ ստեղծմանն, և ծերութեան⁵⁷ նոցա խնամ տարէք, և հրամանացն հնազանդ լերուք, զի արհնութեան նոցա արժանի լիցիք⁵⁸:

գ. երրորդ. պատուեցէք զբահանայսն աստուծոյ իրրե զհոգևոր ծնողն⁵⁹, և ձեր քահանային⁶⁰, որոյ ժողովուրդ էք, խոստովանեցէք, և ի վաստակոց և յաշխատութեանց ձերոց տուք նոցա պտուղ, որպէս զի⁶¹ ազաւթն նոցա, որ փանս ձեր մատուցանեն աստուծոյ՝ ընդունելի լիցի:

դ. Չորրորդ. սուրբ պահեցէք զանձինս ձեր ի մեղաց և անարատ կուսութեամբ մնացէք՝ մինչ արժանի լինիք աւանդ զպսակն արհնութեան, որպէսզի աստուծոյ նուէր լիցին անձինք ձեր և մի սատանայ նման գալլոյ գիշատեալ պատասեօցէ զձեզ:

ե. Հինկերորդ. յիս առնելոյ զպսակն արհնութեան և միաւորիլ սուրբ ամուսնութեամբ ընդ կողակցին⁶² ձերոյ, զոր⁶³ յաստուծոյ պատշաճեցաւ, սուրբ պահեցէք զանձինս ձեր յաւտար և ի պիղծ անկողնոյ⁶⁴, զի մի զպսակն⁶⁵ արհնութեան կորուսանէք, և անկանիք⁶⁶ յանէծս սատակիչս, և զրկիք ի բրիտանութեան անուանէ՛ շունք կոչելով վասն շնութեան մեղացն:

զ. Վեցերորդ. յամենայն ար⁶⁷ երեք անգամ յազաւթս կացէք՝ ի լուսանալ աուրն և ի ժամ ոտելոյ հացին և երէկունն⁶⁸ ի ժամ քնոյն: Յամէն ժամ ժԲ. (12) ծունր այր մարդն և Ի. (20) ծունր⁶⁹ կի՛ն մարդն. և որ այլ աւելի կարէ՛ զայն իւր հոգւոյն⁷⁰ զարութիւնն և սէրն գիտէ, զոր առ աստուած ունի:

է. Շարաթն⁷¹ արն և կիրակէն⁷² անպատճառ յեկեղեցին երթալք, որ զաւետարանին ձայնն լսէք ու⁷³ Քրիստոսի ձայնին լինիք արժանի, և զպատարազն տեսանելով զՔրիստոս տեսանէք:

⁴⁵ BC որ: ⁴⁶ B ուր: ⁴⁷ C առաջինն: ⁴⁸ A ասացուք: ⁴⁹ A այս աստուածային: ⁵⁰ AB արէնքս, ⁵¹ A աղահասակ: ⁵² A մանկունք: ⁵³ AB միաբանիք: ⁵⁴ AB զծնողսն: ⁵⁵ A հետ ⁵⁶ B ձեր: ⁵⁷ B ի ծերութեան: ⁵⁸ B լինիք: ⁵⁹ B ծնողսն, C ծնողն: ⁶⁰ C քահանային: ⁶¹ B զի չիր: ⁶² C կողակցին: ⁶³ C որ: ⁶⁴ A պիղծ անկողնոյ: ⁶⁵ AB պսակն: ⁶⁶ A անգանիք: ⁶⁷ B յաւրն փխ յամենայն ար: ⁶⁸ AB երէկունն: ⁶⁹ A ծունր չիր: ⁷⁰ AB հոգւոյն: ⁷¹ AB շարաթ: ⁷² C կիրակէ արն: ⁷³ AB լսելով փխ լսէք ու:

- բ. Յամենայն կիրակի⁷⁴ զշաբաթուն⁷⁵ յանցանքն խոստովանեցէք և ի Խ. (40) արն հետ մի հաղորդեցէք. և յամենայն⁷⁶ տէրունական տան յեկեղեցին ժողովեցէք և զխորհուրդ տանին հասկացիք. և զկիրակին ի բան աննելոյ սուրբ պահեցէք:
- [բ.] Չբերանն, որ աստուծոյ անուանն խոստովանող է և հաղորդական⁷⁷ ի յիշոցաց սուրբ պահեցէք և յամենայն ազտեղի խաւսից, և մի գաստուծոյ ստեղծուածն զլեզուն սատանայի անէք գործի:
- [ժ.] Չամենայն սգաշարաձու ձեր ամբացուցէք երկեւդին⁷⁸ աստուծոյ. զաչքն՝ ի յարատ հաշիւոյ, զականջն՝ ի շար և ի մեղաց խրատէ, զձեռն՝ ի զրկելոյ և ի զողանալոյ և ի հարկանելոյ, և զտոքն՝ ի մեղս քնթանալոյ⁷⁹: Այլ այսպէս արարէք. աշաք գաստուծոյ զեղեցիկ արարածս տեսէք, և բերանով զարարիչն արհնեցէք, ականջով զպատուիրանս նորա լսեցէք. ձեռաւ յազաւթս և յաշխատութիւն գործոյ և յողորմութիւն աղբատաց բարեկործիցէք⁸⁰, և զսիրտ ի շար խորհրդոց սրբեցէք⁸¹:
- Եւ այս ամենայն ումեք իւր անձինն արէնք և⁸² զգուշութիւն յաստուածային հրամանացն և ի զրոց սրբոց:
- Բ. Իսկ երկրորդն, որ եղբարցն անեն և⁸³ վասն սիրոյն աստուծոյ զեղբայրսիրութիւն⁸⁴ կատարեն՝ այս է.
- ա. Վասն զի աշխարհս այս ծով է և մարդիկ այլեկոծին ի ամա պէս պէս պատահամբ գործոց. և թէ⁸⁵ որ յեղբայրութենէս ի փորձութիւն մարդկան անկանիցի⁸⁶ և ի բռնաւորաց⁸⁷ նեղիցի, ամենայն եղբայրքն ջան եղևալ հանցեն⁸⁸ զնա ի հասեալ⁸⁹ վշտացն, զի որ եղբայր եղև մեզ. Քրիստոս ասացէ՝ «Ի բանդի էի և եկիք առ իս»:
- բ. Եւ եթէ որ ի փորձութիւն մեղաց անկեալ⁹⁰ ի ձեռս սատանայի մատնեցի՝ ամենայն եղբարքն աղաթիւք և բարի խրատով և ողորմաւար, այլ և սատախիւք և ամենայն հնարիւք՝ աղատեացեն զանկեալն⁹¹ ի ծառայութիւն մեղաց և Քրիստոսի բնծայեացեն, նմանեալ այնմ, որ զթացաւ ի վերայ անկելոյն⁹² ի ձեռս առաջակացն⁹³:
- գ. Եւ թէ⁹⁴ որ յազբատութիւն անկանիցի⁹⁵ և ի շքաւորութիւն մարմնոյ, այլ եղբարքն ըստ կարողութեան և ըստ ուժոյ ազնեացեն, և ազբատ եղբարքն ազնելով աստուծոյ փոխ տացեն, որ հազարապատիկ վճարէ յայսմ աշխարհի և ի հանդերձեալն զկեանսն յաբառնականս⁹⁶ պարգևեցէ:
- [դ.] Եւ թէ⁹⁷ որ ի տկարութիւն և ի ցաւ հիւանդութեան մարմնոյ անկանիցի⁹⁸ յամենայն ար եղբայրութենէն⁹⁹ ի տեսութիւն զնացեն և զհիւանդացեալն մխիթարեացեն, և զեղով և բժշկով ձեռնառ լիցին, որպէսզի լուսեցեն ի Քրիստոսէ, թէ¹⁰⁰ «Հիւանդ էի և տեսէք զիս»:
- [ե.] Եւ թէ¹⁰¹ ումեք ար վաղձանին հասցէ և փոխեցի յանցաւոր կենացս՝ ամենայն եղբարքն զմարմինն պատուով ի զերեզման¹⁰² տանիցեն¹⁰³,

⁷⁴ C կիրակէ Ակերակէի: ⁷⁵ B զշաբաթուն: ⁷⁶ B ամէն: ⁷⁷ C և հաղորդական չիք: ⁷⁸ AB երկեւդին: ⁷⁹ AB և զտոքն ի մեղս քնթանալոյ չիք: ⁸⁰ AB բարեկործիցէք: ⁸¹ C սրբիցէք: ⁸² C արէնք և չիք: ⁸³ B և չիք: ⁸⁴ B զեղբայրութիւն: ⁸⁵ AB եթէ վիս և թէ: ⁸⁶ A անգանիցի: ⁸⁷ A և բռնաւորաց, ⁸⁸ B հանիցեն: ⁸⁹ AB հասանել: ⁹⁰ A զանգեալն: ⁹¹ A անգեալ: ⁹² A անգելոյն: ⁹³ AB առաջակաց: ⁹⁴ AB եթէ: ⁹⁵ AB անցի: ⁹⁶ C յաբառնական: ⁹⁷ AB եթէ: ⁹⁸ A անցի: ⁹⁹ B յամէն ար ասողջ եղբայրքն վիս յամենայն... եղբայրութենէն: ¹⁰⁰ AB եթէ: ¹⁰¹ AB եթէ: ¹⁰² A զերեզմանի: ¹⁰³ B թաղեցին ի զերեզմանի:

որպէս վայել է, և զՏոգն Տոգոյն տացեն, և ամեն կորայր¹⁰⁴ մին ար պատարադ տայ¹⁰⁵ աննել յանուն վաղճանելոյն:

Եւ այս սահման է, զոր եղբարքն միմեանց անեն, եթէ մատուոր և¹⁰⁶ եթէ հետաւոր լիցի կորայրն՝ սիրով և հաւատով ի մէջ իւրեանց համարեսցին:

Իսկ երրորդ գլուխն այն է¹⁰⁷, որ և այլոց բարի արասցեն, որ դան ի հետաւոր աշխարհաց, և կամ ի սոցանէ զնան յայլ աշխարհ՝ աւգտին և աւգտեցուցանեն:

Եթէ վարդապետ եկեսցէ յայլ¹⁰⁸ աշխարհէ՝ զյխաւորք կորարցն ի տեսութիւն երթիցեն, և պատուեսցեն զնա, և շահեսցին ի վարդապետական բանիցն, և ժողովեսցին առ նա ի բարոյութիւն սուրբ գրոց. և ի զնայն՝ յուղարկեսցեն¹⁰⁹ զնա սիրով, և ըստ մարմնոյ պիտոյիցն ըստ կարին տացեն հոգևոր սերմանսդին զմարմնաւոր պտղաբերութիւնն: Այսպէս և եպիսկոպոսաց արասցեն. նոյնպէս վանականաց և աղաւթարար կորարցն և ճգնաւորաց ասպնջական և հանկուցիչք¹¹⁰ լիցին:

Եւ խաղաղասէրք լինիցին¹¹¹ կորարքս մեր ի մէջ աշխարհի. ընդ ամենայն աղդ մարդկան սիրով անիցեն զասել և զյսել, որ յամենայն ազգէ իմաստունք լիցին՝ մեծարեսցին և յիմաստութենէն շահիցին¹¹² առանց հակառակութեան, հեղ բարուք, հանդարտ զնացիւք, պարկեշտ կացաւք¹¹³, իրրև զգահեկան ոսկի ի մէջ տղմոյ աշխարհիս անաղտ և յստակ¹¹⁴ մնալով. իրրև զլոյս արևու ի մէջ¹¹⁵ դարշահոտութեանց պայծառ մնալով՝ յիւրեանց բարոյն տալ այլոց՝ որպէս արեղական¹¹⁶ լոյս, և յայլոց¹¹⁷ պղծութեանց ոչ ուսանիլ, որպէս և արեգակն ոչ անու յայլոց պղծութեանց:

Արդ, զուք պատուական եղբարք, այսպիսի աւրինաւք զարդարեցէք զանձինս ձեր, զի լինիցիք միմեանց որպէս զպարիսպ ամուր, զի որպէս բազմութիւն բարանց ժողովեալ ի մի տեղի պարիսպ ամբութեան և պահպանութեան է¹¹⁸ բազաքի, այսպէս և զուք իրրև զկենդանի բարինս սիրովն աստուծոյ մածեալ՝ անասիկ ամբութեամբ կացէք ի հաստատութիւն: Եւ որպէս զբախտ բազում տնկաւք զարդարի, այսպէս և զուք եղերուք իրրև զզբախտ աստուծոյ բաղցրահաշակ պտղով զարդարեալ և որպէս բուրաստան անուշահոտ ծաղկաւք լիացեալ¹¹⁹: Եւ զորաւրինակ թագ թագաւորի ի յոսկոյ և ի մարդարտոյ և յականց պատուականաց յաւրինի, նոյնպէս և զուք թագ պարծանաց լերուք¹²⁰ զլիտոյն մերոյ Քրիստոսի, և իւրաքանչիւր զիւր զեղեցիկ գործս փայլեցէք իրրև զակն լուսատու, և որպէս ակունքն յոսկին շարեալ¹²¹ միանան, նոյնպէս և զուք յամբիծ¹²² հաւատն և յանկեղծ սէրն յարմարեալ¹²³ զեղեցիկ և պայծառ լուսով փայլեցէք, եղերուք մար ձերոյ եկեղեցոյ կենդանի զանձ և պարծելի որդիք, եթէ ուտիցէք և եթէ ըմպիցէք¹²⁴ զամենայն ի փառս աստուծոյ արասչիք:

Արդ, որ սիրէ զեղբայրութիւնս զայս և խառնի ի միաբանութիւն սոցա, պահեսցէ նաև զաւրէնս զայս և զսահման կորարցս՝ զրեսցի նա ի զիր միաբանութեանս և Քրիստոս գրեացէ ի զպրութիւն կենաց, իսկ շնացաւոյն և յիշոցնատուն և այլ զանազան մեղաւք վարեալն մի՛ կացցէ ի զրի աստ. իսկ որ աւրի-

¹⁰⁴ B կորայրք: ¹⁰⁵ B տան: ¹⁰⁶ B և չիք: ¹⁰⁷ B այս է: ¹⁰⁸ B յայլ չիք: ¹⁰⁹ B ուղարկեսցին: ¹¹⁰ B հանկուցիչք, C հանկուցիչ: ¹¹¹ AB լինին: ¹¹² AB շահեսցին: ¹¹³ B պարկեշտ կացաւք: ¹¹⁴ B յիստակ: ¹¹⁵ A արևու ի մէջ չիք: ¹¹⁶ A արեղական: ¹¹⁷ Այստեղ, թերթերի կորուստի պատճառով, ընդհատուած է C ձեռագիրը: ¹¹⁸ A պահպան ամուր է: ¹¹⁹ B պտղովք լցեալ փխ ծաղկաւք լիացեալ: ¹²⁰ B եղերուք: ¹²¹ A շարել: ¹²² B յամբիծ: ¹²³ A յարմարել: ¹²⁴ A ըմպիցէք:

նապահրն են՝ սիրով գմբեանս շահեսցին: Աւագ եղբայրն¹²⁵ քաղցրութեամբ¹²⁶ խրատեսցէ և կրօնքն հնազանդութեամբ¹²⁷ լուիցէ, որ գիտունն է մի հարատացի և որ տխմարն է մի յուսահատեսցի, ալ իբրև գժրիստոսի անգամ միմեանց խնամ տանիցին, գմեծն և գիմատունն պատուեսցեն և զփոքրն և զանուսումն գթով խրատեսցեն:

Տասին գլխին և բառասնին մեծն շամենայն ժամ ի վարդապետաց ուսցին և զալան ազատեսցուցեն¹²⁸, և զամենայն բան բարի խրատով գլխաւորացն արատեսցեն:

Л. С. ХАЧИКЯН

УСТАВ «БРАТСТВА» ГОРОДА ЕРЗЫНКИ (1280 г.)

(Резюме)

В 1280 году в городе Ерзынке холостые армянские юноши и молодые люди, принадлежавшие к сословию купцов и ремесленников города, организовали «братство», для которого Иоанн Ерзынкаци—видный ученый и поэт того времени—написал «Устав и каноны».

Целью «братства» были общими усилиями оказывать сопротивление «насильникам» и «злым людям», помогать разорившимся товарищам, оказывать друг другу поддержку в различных вопросах экономической и социальной жизни. По своей структуре «братство» приближалось к воинской организации, низшее звено которой состояло из 10 членов, подчиненных десятнику. Из четырех таких звеньев состояло следующее подразделение, находившееся под главенством «сороканачальника». Делами организации ведал особый орган—«старшины братьев», под председательством «главы братства». Вся организация состояла из «старших» и «младших» членов.

Публикуя научно-сравнительный текст устава братства, составленный на основе сличения 3 рукописей Гос. Матенадарана, издатель в кратком предисловии говорит о подобных организациях, существовавших как в городах самой Армении (Ани, Ван, Карин), так и в зарубежных армянских поселениях (Кафа, Каменец-Подольский, Султаниэ, Язловец, Станислав и др.) и рассматривает ряд произведений средневековых армянских поэтов—Иоанна и Константина Ерзынкаци, а также безымянных певцов-гусанов, созданных по заказу молодых людей—членов указанных «братств» и отражающих их мироощущение, идеи и настроения.

Более подробную статью об уставе и самом «братстве» города Ерзынки издатель опубликовал в № 12 «Известий» АН АрмССР (общественные науки) за 1951 год.

¹²⁵ В աւագ, գիտուն և խնամատուն եղբայրն: ¹²⁶ В բարոզութեամբ: ¹²⁷ В կրօնքն և անմիտն և աղէան հնազանդութեամբ: ¹²⁸ В ազատեսցուցեն:

L. S. KHATCHIKIAN

LE STATUT DE LA «CONFRERIE» DE LA VILLE D'ERZENKA (1280)

En 1280, adolescents et jeunes gens célibataires, issus de familles d'artisans et de commerçants arméniens de la ville d'Erzenka, s'organisèrent en «confrérie» dont le statut et les canons furent rédigés par Hovhannès Erzenkatsi, savant et poète réputé de l'époque.

La «confrérie» se donnait pour tâche de lutter contre «les malfaiteurs» et «les hommes méchants», d'aider les camarades ruinés et d'assurer à ses membres un soutien en toutes questions, sociales ou économiques. Par sa structure, la «confrérie» s'identifiait à une organisation militaire. Le groupe initial était formé de 10 membres et commandé par le «chef des dix». Ces groupes, réunis par quatre obéissaient au «chef des quarante». Les affaires étaient administrées par un organe spécial des «frères aînés» que présidait le «chef de la confrérie». Toute l'organisation se trouvait composée de «membres aînés» et de «membres cadets».

L'auteur qui nous fait connaître le texte comparé du statut de la confrérie, restitué après une analyse scientifique de 3 manuscrits conservés au Maténadaran, retrace en quelques mots, dans sa préface, l'histoire d'organisations semblables ayant existé dans les villes d'Arménie (Ani, Van, Karin) et dans les communautés arméniennes de l'étranger (Caffa, Kaménetz-Podolsk, Sultanié, Yazlovets, Stanislavov, etc.) tout en nous donnant un aperçu des oeuvres de Hovhannès Erzenkatsi et de Constantin Erzenkatsi, poètes arméniens du moyen âge, et des chansons de «kousans» composées à la demande des jeunes membres des «confréries» et inspirées des sentiments et idées de ces derniers.

Le statut de la confrérie d'Erzenka et la confrérie même ont fait l'objet d'un examen plus détaillé que l'auteur a publié dans le N° 12 de 1951 de la Série des Sciences sociales des «Tegheqagir» de l'Académie des Sciences de la RSS d'Arménie.

